քննված գործի առանձնահատկությունները գտնում է, որ ուշադրության է արժանի և գնահատման են ենթակա հետևյալ փաստերը՝

- գործը քննվել է հատուկ հայցային վարույթի կարգով՝ առանց դատական նիստերի,

- ներկայացված ապացույցները չեն պահանջել հավաքագրմանն ուղղված էական ջանքեր և հանդիսացել են Հայցվորի տիրապետմանը ենթակա ապացույցներ, - ծառայություններն ըստ էության արտահայտվել են հայցադիմումի կազմամբ և դատարան ներկայացմամբ:

Վերոգրյալի արդյունքում Դատարանը գտնում է, որ սույն գործով փատաբանի խելամիտ վարձատրության չափ է հանդիսանում 50.000 ՀՀ դրամը, որը ևս՝ հաշվի առնելով հայցի ամբողջությամբ բավարարումը, ենթակա է հատուցման Պատասխանողի կողմից:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 188-189-րդ, 191-192-րդ, 198-րդ, 234.12-ր, 362-րդ հոդվածներով՝

Վ Ճ Ռ Ե Ց

1. «Ագաստ» ՍՊԸ-ի հայցն ընդդեմ պատասխանող «Իջևանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի բավարարել. «Իջևանի բժշկական կենտրոն» ՓԲԸ կողմից վերջի-նիս և «Ագաստ» ՍՊԸ-ի միջև 04.01.2024 թվականին կնքված թիվ «ԻԲԿ-ԳՀԱՊՁԲ-24/2-4» ծածկագրով պայմանագրի 24.06.2024 թվականին կայացված թիվ 334 ծանուցման միակողմանի մասնակի լուծումը ճանաչել անվավեր:

2. Որպես դատական ծախս «Իջևանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ից հօգուտ «Ագաստ» ՍՊԸ-ի բռնագանձել՝

2.1. 30.000 (երեսուն հազար) ՀՀ դրամ՝ որպես նախապես վճարված պետական տուրքի գումար.

2.2. 50.000 (հիսուն հազար) ՀՀ դրամ՝ փաստաբանի խելամիտ վարձատրության գումար: Մնացած մասով դատական ծախսի բռնագանձման պահանջը մերժել և դատական ծախսերի բաշխման հարցը համարել լուծված:

3. Վճիռը կամովին չկատարելու դեպքում այն կկատարվի Հարկադիր կատա-րումն ապահովող ծառայության միջոցով՝ պարտապանի հաշվին:

4. Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և կարող է բողոքարկվել վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ հրապարակվելու օրվանից մեկամսյա ժամկետում:

Դատավոր՝ **Դանիել Մխեյան**

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am